

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ, ՆՇՈՒՄՆԵՐ,
ՎԻՃԱՐԿՈՒՄՆԵՐ

*COMMUNICATIONS, NOTES
ET DISCUSSIONS*

«ԱՐՄԱՏ ՀԱԻԱՏՈՅ»Ի ԱՂԲԻԻՐՆԵՐԻՑ (Գ)*

ՅԱԿՈՐ ՍՐՃԵՑԻ – ԶԵՆՈՐ ԵԴԵՍԱՑԻ – ԴԱՀԵՂ ԵԴԵՍԱՑԻ

Օգտագործում ենք հետևեալ յայտարարումները.

ԱՀ – Արմատ հաւատոյ (ընդհանրապէս) : Ստորեւ բերուող հաստատումների էջերը սլալմանականօրէն նշանակուած են Արմատ հաւատոյի ընդարձակ խմբագրութեան Երեւանի թիւ 3295 ձեռագրի հիման վրայ, թէեւ բնագրական ճշգրտումների համար լռելեայն հաշուի են առնուել նաեւ ուրիշ օրինակներ :

Համ. խմբ. – Արմատ հաւատոյի համառօտ խմբագրութիւնը ներկայացնող սլալմանականօրէն հիմնական օրինակը, Երեւանի ձեռ. թիւ 2080 :

Ստուգ. օր. – Արմատ հաւատոյի հեղինակային ստուգողական օրինակը, Երեւանի ձեռ. թիւ 1331, որի մասին տեսնել «Էջմիածին» ամս., 1977, թիւ 12, էջ 56, ծան. 18 :

Ա.

ՅԱԿՈՐ ՍՐՃԵՑԻ

Ասորական միաբնակ եկեղեցու նշանաւոր մատենագիրներից է Յակոբ Սրճեցին, ծնուած՝ 451 թ., մեռած՝ 521 թ. : Մեծ համբաւ է վայելել որպէս բազմահմուտ հեղինակ եւ հռետոր : Ունի այլազան բնոյթի գրուածքներ, որոնց թւում՝ բազմաթիւ ճառեր¹ :

*) Մեր խոյ շարքը, որ սկսել էինք հրատարակել 1977 թուականին «Էջմիածին» ամսագրում, հանդամանքների բերմամբ կանգ էր առել՝ երկու յօդուած լոյս տեսնելուց յետոյ : Դրանցից առաջինը նուիրուած էր Արմատ հաւատոյում ընդգրկուած հեղինակներից Ժրենէոս Լուզդոնացուն («Էջմիածին», 1977, թիւ 8, էջ 41-47), իսկ երկրորդը՝ Բիսապիոս Անտիոքացուն եւ Գրիգոր Սքանչեւազորին (ամս., 1977, թիւ 12, էջ 53-59) : Այժմ շարունակում ենք շարքը՝ նոյն ծրագրով, ըստ որում մեր նպատակն է ոչ թէ առաջ Արմատ հաւատոյի աղբիւրների տեսութիւնը, այլ բնագրաբանական առումով քայլ առ քայլ քննել Արմատ հաւատոյի եւ նրա աղբիւրների յարաբերակցութեան հարցերը :

1. W. WRIGHT, A Short History of Syriac Literature, London, 1894, pp. 67-72.

Հայկական մատենագրության մէջ Յակոբ Սրճեցու անունով յայտնի են մի շարք ճառեր՝ ասորերէնից թարգմանուած, ինչպէս նշել է Զարբհանալեանը՝ վենետիկեան ձեռագրերի եւ այլ աղբիւրների օգտագործմամբ²։ Նրանցից մի որոշ մաս, ինչպէս եւ ուրիշներ, տը-սկագրուել են Կ. Պոլսում 1722 թ.³։

Ահում ունենք Յակոբ Սրճեցու անունը կրող երեք հատուածներ.

1. Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի՝ ի գառնի որ յաստղն եւ ի մոգքն.

Մոգքն որք քննեցին զխորինս հարցուածովն իւրեանց ի ծնունդս Աստուածորդւոյն, լուսինն պահեցին ընտրողապէս։ էջ 353ա։

Այս հատուածը խմբագրուած է մի սրբուածքից, որը մեր ձեռքի տակ եղած օրինակում Յակոբ Մծբնացու անունն է կրում՝ «Ճի ճառէն երանելւոյն Յակովբայ Մծբնայ եպիսկոպոսի, յաղագս աստեղացն եւ մոգուցն եւ կոտորածի մանկանցն Բեթղեմի ի Հերովդէէն» (սկ. «Մա-զումն մեծ, որ լցեր զաշխարհս»), Երեւանի Պետ. Մատենադարանի ձեռ. թիւ 993, էջ 27բ-29բ⁴։

Աստարակոյս՝ Սրճեցի անունն փոխարէն այստեղ Մծբնացի անունը թիւրիմացութիւն է։ Այս ճառի սկզբի հատուածը կայ Երեւանի թիւ 3457 ձեռագրում՝ «Նորին Յակոբայ ասացեալ յաղագս աստեղն եկաւորութեան» (էջ 226ա-226բ) խորագրի տակ, առանց հեղինակի մականուան. սակայն յայտնի է, որ այս խորագրի «Նորին»ը Սրճեցին է, որովհետեւ նախորդ բնագիրը, որ է «Նորին Յակոբայ ասացեալ՝ յաղագս Անտիոքայ քաղաքին թէ որպէս մտին աշակերտել զնա առաքելքն» (սկ. «Լուսով բանիւ լըր» գամ առ քեզ», էջ 225բ-226ա) ուղղակի Յակոբ Սրճեցու անունն է կրում ուրիշ շատ ձեռագրերում⁵։ Որ այս ճառը Սրճեցուն է պատկանում եւ ոչ թէ Մծբնացուն, հաստատուում է յիշեալ թիւ 3457 ձեռագրի եւ ԱՀի միաձայն վկայութեամբ։

2. Հ. Գ. ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ, Մատենադարան հայկական քարգմանութեանց մասնաց, Վենետիկ, 1889, էջ 572-575։

3. Տես Գիրք եւ գառն հոգեշահ, արարեալ յուղղափառ եւ յաստուածաբան վարդապետաց, Բիւզանդիա (Կ. Պոլիս), ի տպարանի Սարգսի, 1722։ Հմմտ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ, Հայկական մոռ մատենագիտութիւն, հտ. Ա, Վենետիկ, 1909, էջ 439-441։

4. Այս ճառը, որ տպագրուած է Գիրք եւ գառն հոգեշահ ժողովածոսի Գ. զլխում, նոյնպէս Մծբնացու անունն է կրում՝ ձառ երանելոյն Յակոբայ Մծբնայ եպիսկոպոսի ասացեալ յաղագս աստեղն եւ մոգուցն եւ մանկանցն Բեթղեմի։ Հմմտ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ, էջ 439։

5. Տես Երեւանի Պետ. Մատ. ձեռ. թիւ 4749 (էջ 263բ-275բ) եւ թիւ 5387 (էջ 46ա-51բ) եւ ուրիշներ։ Նոյնպէս է նաեւ Ս. Ղազարի հայերէն ձեռագրերում։ Իբրեւ աղբիւրն յիշուած է նաեւ անտարական ձեռագրերում. Հմմտ. Հ. Գ. ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ, էջ 574։

ԱՀի հատուածը բառական քաղուածք է այս ճառից, այլ խմբագրուած է ազատօրէն։ Հետեւենք թիւ 993 ձեռագրին։ ԱՀի այն խօսքերը, թէ մոգերը քննեցին զխորինս հարցուածովն իւրեանց ի ծնունդս Աստուածորդւոյն, խտացումն են ճառում արտայայտուած մտքերի, ըստ տրոնց՝ մոգերն, աստղի առաջնորդութեամբ հասնելով Բեթղեմիէն ալիքն եւ երկրպագելով նորածին արքային, հոգեկան աղբումով կանխատեսում են նրա կատարելիք նուաճումները. «Յայնումհետէ ակաւ արքայն նորածին դարձուցանել զդերութիւն հեթանոսաց եւ յաշխարհէն ներքովիցայ արար սկիզբն՝ ժողովել զցրուեալսն աղանց մոլորելոց։ Անդրանիկն թաղաց երկրպագեաց նմա ի ձեռն մոգուցն, զի հանդերձ նովաւ ընկրկեցին ամենայն թագք երկրի պատուել զնա. թագաւորութիւնն այն որ գլուխ էր սկայից, ծառայեաց նմա, զի լիցի աւրինակ ամենայն երկրի նմանել նմա»⁶ (էջ 28բ), «հաւար է եւ զաշխարհ ամենայն ըմբռնելոց է քաջութեամբ իւրով, երկինք լուսաւորաւք վկայէ թագաւորութեան դորա՝ զի մեծ է արքայութիւն դորա, եւ անկանին առաջի դորա տէրութիւնք լուսոյ. ի վերին կամարս հաստատութեան տեսաք զլոյս դորա, զի լոյս արեգական ոչ հաւասարի ճառագայթից դորա. հաստատութիւնք երկնից մեծ արքայ դիտեն զդա եւ սքանչելեաւք ծանուցին մեզ զհանգ մեծութիւն դորա» (էջ 29ա)։ Սրճեցին այնուհետեւ պատմում է, որ մոգերը, նորածին արքային սպասող փառքը յայտնութեան ուժով տեսնելուց յետոյ, որոշեցին չհանդիպել Հերովդէս թագաւորին, որն սպասում էր նրանց քննութեան արդիւնքներն իմանալու, որպէսզի սպանել տար նորածինին. «Պատուեցաւ թագաւորն թագաւորաց ի մոգուցն. եւ պատարագաւք երկիր պագին նմա եւ չոգան զնալ ցընծութեամբ. փոխեցին զճանապարհն եւ ոչ զնացին առ Հերովդէս՝ զի ծանեան զնենդ նորա» (էջ 29ա). այս վերջին խօսքերն են, որ խմտացուած են ԱՀի հատուածում, թէ մոգերը լուսինն պահեցին ընտրողապէս։

ԱՀի այս հատուածում, ընտրողապէս բառից յետոյ, յաջորդում է «Ընդէ՞ր ոչ այսպէս ծանր լինի խորհուրդ նորա առ քննողսն կամ զրպարտողսն որք աւճտեն զնա զաղանապէս հարցուածաւքն իւրեանց» (էջ 353ա-353բ) նախադասութիւնը, որը, մեր կարծիքով, Աղբիւրն

6. Խօսքը վերաբերում է Պարսից հզօր թագաւորութեանը, որի ներկայացուցիչն էր, ըստ պարականոնների վկայութեան, Մելքոն մոգ թագաւորը. «Գանդի յայնմ ժամանակի թագաւորութիւն Պարսից զօրաւոր էր եւ յաղթող քան զայլ թագաւորսն՝ որ էին յաշխարհն Արեւելից. եւ միշտ որք էին թագաւորք մոգուցն՝ հղարք երեք. առաջինն Մելքոն, որ ունէր զիշխանութիւն Պարսից. եւ երկրորդն Պաղտատար, որ տնէր զիշխանութիւն Հնդկաց. եւ երրորդն Գասպար, որ ունէր զաշխարհն Արաքացոց» (տես Անկանոն գիրք նոր Կոտակարանաց, Վենետիկ, 1898, էջ 19-20)։

գրչից է եւ քննադատարար քաղկեղոնականներին է ուղղուած, թէ ինչո՞ւ նրանք չեն հետեւում մոզերի օրինակին՝ Աստուածորդու մարդեղութեան հարցում, եւ նրան պատառոտում են իրենց հարցադրումներով:

2. Նորին՝ յետ սակաւուց.

Կայծալն երեղէն զգեցաւ մարմին եւ ել յաշխարհս, զի կիզցէ գորումն սերմանեալ չարին: Էջ 353բ:

Բառացի փոխառութիւն է նոյն «Յաստղն եւ ի մոզքն» ճառից՝ «Կայծալն... սերմանեալ չարին յամենայն կողմանա» (ձեռ. թիւ 993, էջ 29ա):

3. Նորին՝ ի Յարութեան ճառէն.

Ձայսպիսի հրաշալի գործքս Միածնին ո՞վ պատառէ եւ երկու բնութիւն լրբի ասել զՄիածնին: Էջ 353բ:

Համ. խմբ.ն ունի՝ Ձայս հրաշալի... եւ երկուութիւն լրբի ասել զՄիածնին (էջ 34բ):

Հատուածը քաղուած է հետեւեալ ճառից. «Երանելոյն Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի ասացեալ ի Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ի զինուորսն որ պահէին զգերեզմանն» (սկի. «Յարութիւն քո, Տէր, զարթուցանէ զիս»), Երեւանի Պետ. Մատ. ձեռ. թիւ 4929, էջ 136ա-150բ:

Հեղինակը Քրիստոսի յարութեան մէջ փառաբանելով աստուածային զօրութեան նշանները, գրում է. «Ձայսպիսի թաղաւոր Հըրեալքն սպանին եւ դատապարտեցան եւ ցրուեցան, ո՞վ երկմտէ վասն թաղաւորութեան եւ աստուածութեան նորա: Յայսպիսի Միածինս որ մեռաւ եւ յարեաւ, եւ է ի ծածուկ եւ յայտնի, ո՞վ իշխեսցէ քննել զմեծութիւն նորա: Ձայս գործքս Միածինն ո՞վ պատառէ եւ երկու բնութիւն լրբի ասել զՄիածինն» (էջ 146ա-146բ)⁷:

Բ.

ՁԵՆՈՒ ԵՂԵՍՍՈՒ ԿԱՄ ԳԱԶԻՐԱՑԻ

Ասորի եկեղեցական մատենագիր Դ-Ե. դդ.: Եփրեմ Սուրբ Ասորու աշակերտներից էր եւ նշանաւոր Իսահակ Անտիոքացու ուսուցիչը: Ասորական աղբիւրները նրա դրական աշխատանքներից յիշատակում են ճառեր, նամակներ եւ այլն⁸:

7. Այս ճառը տպագրուած է Գիրք եւ ճառ հոգեշահ ժողովածուի Թ. գլխում. Հմմտ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ, էջ 439:

8. W. WRIGHT, p. 38-39.

Հայ մատենագրութեան մէջ նրա անունով յայտնի են մի շարք ճառեր⁹, որոնցից մի քանիսը տպագրուել են «Հանդէս Սմարտեայ»ում (1921-22 թթ.) եւ «Բաղմալէպ»ում (1922 թ.):

Ա.Հում նրա ճառերից բերուած են երեք հատուածներ.

1. Ձեմորայ եպիսկոպոսի.

Մեք ոչ ասեմք՝ եթէ մահ մարմնոյն միայն է, որպէս ոչ ասեմք՝ քէ կեանք Բանին միայն է, այլ ասեմք՝ եթէ կեանք Բանին եւ մարմնոյն. եւ եթէ ամարգանք եւ մահ՝ Բանին եւ մարմնոյն: Էջ 354ա:

Համ. խմբ.ը չունի՝ եւ եթէ ամարգանք եւ մահ՝ Բանին եւ մարմնոյն բառերը (էջ 35ա):

Այս հատուածի աղբիւրին պատահում ենք ձեռագրերում: Երուսաղէմի թիւ 1549 ձեռագիրն ունի՝ «Երանելոյն Ձեմորայ եպիսկոպոսին» (սկի. Մեք ոչ ասեմք զմահն մարմնոյն միայն), էջ 1626: Իսկ Չարբահանալեանը վենետիկեան ձեռագրերից նշում է՝ «Վկայութիւն վասն մարդեղութեան» (սկի. «Եւ ոչ ասեմք եթէ մահ մարմնոյն միայն է»)¹⁰:

2. Ձեմորայ եպիսկոպոսի.

Եկեր Գառն ճշմարիտ գառն խորհրդոյ, եւ ապա ետ զմարմին իւր աշակերտաց իւրոց: Էջ 371ա:

Համ. խմբ.ն աղաւաղմամբ ունի՝ եկեր զճշմարիտ գառն խորհրդոյ... իւրոց (էջ 46ա):

Ստուգ. օր.ն ունի՝ ետ զմարմին եւ գարիւն իւր (էջ 22), ուր «եւ զարիւն» բառերի աւելացումը վրիպում է:

Հատուածը խմբագրուած է «Երանելոյն Ձեմորայ եպիսկոպոսի» ի նոյն խորհուրդ [ի լուստումն ոտից աշակերտաց]՝ ճառի հետեւեալ հատուածից.

«Յայսմ տաւնի՝ յորում եհատ Տէրն մեր զմարմին իւր սրով եւ բաշխեաց աշակերտացն, զի եղիցին ուտել երկիղիւ: Բանդի եկեր նախ Գառնն ճշմարիտ զգառնն խորհրդոյ, եւ ապա եհատ զմարմին իւր, զի արար քեզ զերկոսեան մի, ըստ այնմ՝ զոր առաքեալ ասէ»¹¹:

3. Եփրեմի եւ Ձեմորայ.

Ի գիմոյն ա՛ն գայատառն, եթաց ի ջուրն եւ լուաց ի Հոգւոյն շնորհացն եւ ետ Յուդայի: Էջ 371բ:

9. Հ. Գ. ԶԱՐԲԱՆԱԼԵԱՆ, էջ 467:

10. ԱՌԳ, էջ 487:

11. Երանելոյն Ձեմորայ եպիսկոպոսի ի լուստումն ոտից աշակերտաց, հրտ. Հ.

Ղ. Տ., «Բաղմալէպ», 2 (1922), էջ 290:

մից, որովհետեւ դրանով կտրուում է քերականական կապակցութիւնը նախադասութեան «որ է Աստուած յԱստուծոյ» եւ «եկն եւ ձղեւ մարդի մարդկանէ» մասերի միջեւ. իսկ այդ կտրուածութիւնը վերացնելու համար լաւագոյն դէպքում անհրաժեշտ է լինում աւելացնել մի շաղկապ: Ինչպէս երեւում է՝ այդ կտրուածութիւնն զդալով է, որ հրատարակիչը, քնադիրը լատիներէնի թարգմանելիս, անհրաժեշտաբար աւելացրել է «եւ» շաղկապը. «qui est Deus de Deo, et venit et factus est homo ex muliere»¹⁷:

Մենք ԱՀում այդ ստորակէտը տեղադրեցինք «յԱստուծոյ» բառից առաջ եւ դրանով երեւան եկաւ նախադասութեան անթերի ներդաշնակութիւնը՝ առանց շաղկապի. «որ է Աստուած, յԱստուծոյ եկն...»:

ՅԱԿՈԲ Ս. ԱՆԱՍԵԱՆ

17. Անդ, էջ 75: Մեր կարծիքով՝ «Աստուած յԱստուծոյ» կարդալու մղումն առաջացել է հաւատոյ հանդանակի «Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ» արտայայտութիւնից:

Résumé

LES SOURCES DU RECUEIL «ARMAT HAWATOY»
YAKOB SRCEC'I - ZENOB EDESAC'I - DAHEL EDESAC'I

HAKOB ANASSIAN

C'est la troisième partie d'une série d'articles dont les deux premières avaient été publiées naguère dans la revue «Ejmiacin» (1977, nos 8 et 12). Le but de l'auteur n'est pas celui de proposer une théorie des sources du recueil, mais bien celui de vérifier leur rapport mutuel selon les données textuelles. Sont examinés ici trois fragments de Yakob Srcec'i (Jacques de Saroug), trois fragments de Zenob d'Edesse et un fragment de Dahel d'Edesse, connu aussi comme At'ełaha Ourhayec'i (Aithalla d'Ourha).